

Գեղարքունիքցիներին համար մեր գյուղը ոչ միայն ծննդավայր է, այլ նաև հայրենիք է, օդ է ու ջուր: Շատերը «գյուղ» բառը լսելիս պատկերացնում են աշխարհից կտրված, ժամանակակից հնարավորություններից զուրկ մի տարածք, որտեղ մարդիկ անտեղյակ են ամեն ինչից: Այդ պատճառով էլ մենք աշխարհին ասելու ու ցույց տալու բաներ շատ ունենք, որպեսզի բոլորն իմանան, որ գյուղը երբեմն կարող է հազար անգամ ավելին արժենալ և հազար անգամ ավելի գեղեցիկ լինել, քան ուրիշները կարող են պատկերացնել:

Լավագույնը, որից կարելի է սկսել, գյուղի սքանչելի բնությունն է, որը հաստատ բացահայտման կարիք ունի, և հենց այդ բացահայտումների հույսով և սպասումով էլ «1+1» թերթի արշավախումբը աշակերտների փոքրիկ խմբով, աջակից ուսուցիչների և համայնքի ներկայացուցիչների ուղեկցությամբ մեկնեց Սպիտակասար՝ բացահայտելու և բոլորին ցույց տալու մեր գողտրիկ անկյունը, որին ինքներս էլ այդքան լավ ծանոթ չէինք:

Գյուղից հորիզոնին նայելիս նշմարվում է մի գեղեցիկ լեռ՝ թաքնված կաթնագույն մշուշի տակ, այն անհասանելի էր թվում, սակայն դարձավ մեր փոքրիկ ճանապարհորդության գլխավոր կայանատեղին: Լեռան անունը Սպիտակասար է: Գտնվում է [Գեղամա լեռնաշղթայի](#) կենտրոնական հատվածում՝ [Հայաստանի Հանրապետության Կոտայքի](#), [Արարատի](#) և [Գեղարքունիքի մարզերի](#) սահմանագլխին: Բարձրությունը՝ 3555 մետր է: Այն հրաբխային լեռնազանգված է, Գեղամա լեռների երկրորդ գագաթն է Աժդահակից /3597մ/ հետո, հարաբերական բարձրությունը արևմուտքից ու արևելքից՝ համապատասխանաբար 250 մետր և 450 մետր: Գագաթային մասն առատ է թափանցիկ ու մոխրագույն օբսիդիանով, որից էլ ծագում է անվանումը: Սպիտակասարի արևմտյան լանջերից սկիզբ են առնում [Գողթ](#) և [Ազատ](#) գետերը: Արևելյան լանջերը մասնատված են խոր հովիտներով: Գմբեթածև է՝ կազմված լիպարիտներից, վանակատներից ու պեռլիտներից:

Շատ խորհրդավոր և գեղեցիկ է չէ՞ հնչում: Եվ այս հրաշքը գտնվում է Գեղարքունիք գյուղում: Սպիտակասար բարձրանալու ճանապարհին հանդիպեցինք վրանների և տնակների/ հնաճ խրճիթների/ շարանների, պարզվեց՝ մեր հարևան եզդիներն էին, ովքեր, ապրելով գյուղից այդքան հեռու, զբաղվում էին անասնապահությամբ և դիմակայում մեզ համար անսովոր ցրտին: Հասկացանք, որ այդ միջավայրը նույնպես արժանի է գնահատման և զարգացման: Խմբով այցելեցինք մոտակա փոքրիկ լճակները, նկարվեցինք, հիասքանչ ժամանակ անցկացրինք և նորանոր մտքերով վերադարձանք գյուղ: Սպիտակասարը հիասքանչ տեղ էր հագստանալու և լավ ժամանակ անցկացնելու համար, և մենք իսկապես հիանում էինք շրջապատող

բնությամբ, սակայն ունեցած գեղեցկությունը հարկավոր է ոչ միայն վայելել, այլև կիսվել դրանով: Տուրիզմը գյուղում զարգացնելը օգուտ կլինի ոչ միայն գյուղի և գյուղացիների, այլև ողջ երկրի համար, քանի որ պատերազմից հետո տիրած բարդ իրավիճակը հաղթահարելու համար յուրաքանչյուրս պետք է ունենա իր ներդրումը: Սա մեր ճանապարհի սկիզբն է, մենք դեռ նոր բացահայտումներ ենք անելու և մեր գյուղը տեսանելի ենք դարձնելու բոլորի համար:

ՄԵՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ